ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ « ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի «մաթեմատիկա» առարկայի ուսուցչի (2 մասնագետ, 45 դասաժամ) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- « Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացվող փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մարտի 2-ից** մինչև **մարտի 15-ը** ներառյալ, ամեն օր ժամը **10:00**-ից **15:00-ը**, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022թ-ի մարտի 17-ին ժամը 14:00-ին** ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Արարատի մարզ, գյուղ Վերին Արտաշատ, Արարատյան 99:

Տեղեկությունների համար զանգահարել (0235)6-01-19,բջջ.099-09-84-84 հեռախոսահամարներով: